



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱՂՕԹՔ՝ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՉՈՐԵՐՈՒ Ե. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Մեր հաւատացեալ ժողովուրդի ուշադրութեան կը յանձնենք, որ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինութեամբ, Կիրակի, 10 Սեպտեմբեր 2006ին, մեր բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենայ Տեր Ողորմեայի աղօթք՝ ի յիշատակ այն անմեղ զոհերուն, որոնք ինկան 2001 թուականի Սեպտեմբեր 11ին, իբրեւ հետեւանք ահաբեկչական ծանօթ արարքներուն: Միաժամանակ աղօթք պիտի բարձրացուի աշխարհի խաղաղութեան եւ պատերազմներու դադրեցման համար:

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին, որ եկեղեցի երթալով աղօթք բարձրացնեն առ Աստուած 11 Սեպտեմբերի զոհերու յիշատակին, ինչպէս նաեւ՝ աշխարհի խաղաղութեան համար:

## **SPECIAL PRAYER FOR THE VICTIMS OF SEPTEMBER 11 AND FOR WORLD PEACE**

By the ordination of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, special prayers will be offered in all our Prelacy churches on Sunday, September 10, 2006, in memory of the victims of the terrorist attacks of September 11, 2001. Prayers will also be offered for global peace and the cessation of wars.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՊԱՏՈՍԱՐԱՆԸ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան , ընկերակցութեամբ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեանի, Հինգշաբթի, 7 Սեպտեմբերին այցելութիւն մը տուաւ Լոս Անճելըսի Հայաստանի հիւպատոսարանը եւ Հայաստան-Սփիւռք Գ. Խորհրդաժողովի նախապատրաստական աշխատանքներու ծիրին մէջ, խորհրդակցութիւն ունեցաւ Հայաստանի հիւպատոս Տիար Արթիւր Մարտոյեանի եւ պատասխանատու պաշտօնատարներէն Տիար Յարութիւն Գոճոյեանի ու Տիկին Արմինէ Պալեանի հետ:

## **PRELATE VISITS THE ARMENIAN CONSULATE**

On Thursday, September 7, the Prelate, accompanied by Rev. Razmig Khatchadourian, visited the Consulate of the Republic of Armenia where he met with Consul Arthur Mardoyan, and members of the consulate personnel Mr. Harout Kojoyan and Mrs. Armine Balian, to discuss the upcoming third Armenia-Diaspora Forum.

### **Ս. ՊԱՏԱՐԱԳ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՄԵՋ**

Կիրակի, 10 Սեպտեմբերին, Լաս Վեկասի ծխական մեր համայնքը պիտի ունենայ Ս. Պատարագ, որ կը կատարուի ամսական դրութեամբ:

Առաջնորդ Սրբազան հօր տնօրինումով, Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Արժ. Տ. Մեսրոպ Ա. Բինյ. Թաշճեան, Լաս Վեկասի Lakes Lutheran եկեղեցւոյ մէջ:

## **HOLY MASS AT THE LAS VEGAS PARISH**

The Armenian Apostolic Church of Las Vegas continues to offer Holy Mass for the community on a monthly basis. On Sunday, September 10, Archpriest Dr. Mesrob Tashjian will conduct Holy Mass at the Lakes Lutheran Church. Services will begin at 3:00 p.m.

### **ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՏԱՐԵԿԱՆ ՏՕՆԱՎԱՃԱՌԸ**

Տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս, Ուրբաթ, Սեպտեմբեր 15-էն սկսեալ մինչեւ Կիրակի, 17 Սեպտեմբեր, տեղի պիտի ունենայ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ եռօրեայ պազարը, «Յենրի Խաչատուրեան» Հայ Կեդրոնին մէջ, Գոուզեան-Չաքարեան-Վասպուրական Ազգ. վարժարանի շրջափակէն ներս:

Տարիներու գեղեցիկ այս աւանդութիւնը նախաձեռնութիւնն է եկեղեցւոյ հովիւին ու հոգաբարձութեան, մասնակցութեամբ իրենց հովանիին տակ գործող Տիկնանց Միութեան ու այլ միաւորներու:

## **ANNUAL BAZAAR OF ST. GREGORY CHURCH IN SAN FRANCISCO**

The annual bazaar of St. Gregory Church of San Francisco will commence on Friday, September 15, at the ՔHenry Khatchadourian ՄՆ Center of KZV Armenian School.

The three-day bazaar is organized by the Parish Pastor and Board of Trustees, with the collaboration of the Ladies Guild and various committees.